ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 553-Ա/2 «23» օգոստոսի 2019 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ (ԿԱՄ) ԹԵՄԱՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ (ՄԻՆՉԵՎ 35 ՏԱՐԵԿԱՆ) ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20)-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Կազմակերպել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և (կամ) թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթ:

2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելված N 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Մրցույթի շրջանակներում իրականացվող աշխատանքները համակարգելու նպատակով ձևավորել մասնագիտական փորձագիտական խորհուրդ՝ համաձայն հավելված N 3-ի:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2019 թ. օգոստոսի 23-ի
N 553-Ա/2 հրամանի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտարարում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և (կամ) թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության **ՄՐՑՈՒՅԹ**:

Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացվում է համացանցային առցանց (on-line) ռեժիմով (գրանցվելով https://grants.scs.am/ հասցեում)՝ **2019 թվականի օգոստոսի 27-ից 2019 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ մինչև Երևանի ժամանակով ժամը 18:00**:

Մրցույթի հրավերի փաթեթը տեղադրված է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի ինտերնետային կայքում (http://scs.am/):

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի գիտական քաղաքականության վարչության գիտական քաղաքականության և զարգացման ծրագրերի բաժնում՝ աշխատանքային օրերին, ժամը 14:00 - 17:00, հեռ.՝ 21-01-40 (118):

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Հավելված N 2
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2019թ. օգոստոսի 23-ի
N 553-Ա/2 հրամանի

ՀՐԱՎԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ (ԿԱՄ) ԹԵՄԱՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ (ՄԻՆՉԵՎ 35 ՏԱՐԵԿԱՆ) ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի օգոստոսի 23-ի N 553-Ա/2 հրամանի համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտարարում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և (կամ) թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) հավելավճարի (այսուհետ՝ Հավելավճար) տրամադրման հայտերի (այսուհետ՝ Հայտ) ընտրության մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ):

1.2 Մրցույթի ֆինանսավորումն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» բաժնի «Բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) հավելավճարների տրամադրում» ծախսային ծրագրի հաշվին:

1.3 Մրցույթն իրականացվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բոլոր բնագավառներով և մասնագիտություններով: Մրցույթի արդյունքում՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված առավել բարձր արդյունավետությամբ աշխատող շուրջ 25 երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) 1 (մեկ) տարի ժամկետով կտրամադրվի ամսական 90 000 ՀՀ դրամ (ներառյալ 20% ԱԱՀ)՝ Հավելավճարի տեսքով:

1.4 Մրցույթի շրջանակներում կատարվող աշխատանքները կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից, իսկ դրանց համակարգումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի օգոստոսի 23-ի N 553-Ա/2 հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից:

2. Մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահանջները

2.1 Մրցույթին կարող են մասնակցել 2019 թվականի հունվարի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և (կամ) թեմաներում ընդգրկված, առնվազն 5 տարվա գիտական կամ գիտամանկավարժական գործունեության աշխատանքային ստաժ ունեցող (հաշվի է առնվում նաև ասպիրանտուրայի առկա ուսուցման տարիները) և մինչև 35 տարեկան անձինք: 35 տարին չպետք է լրացած լինի Մրցույթի Հայտերի ընդունման վերջնաժամկետի օրը:

2.2 Մրցույթի մասնակիցը պետք է լինի Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչ, ինչպես նաև Հավելավճար ստանալու ընթացքում առնվազն 6 ամիս բնակվի Հայաստանի Հանրապետությունում:

2.3 Մրցույթին դիմող մինչև 35 տարեկան երիտասարդ գիտաշխատողները, որոնք միաժամանակ կմասնակցեն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի օգոստոսի 23-ի N 557-Ա/2 հրամանի համաձայն հայտարարված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և (կամ) թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթին և երկու դեպքում էլ կերաշխավորվեն ֆինանսավորման՝ հավելավճար կստանան միայն մեկ ծրագրից:

3. Հայտերի լրացման և ներկայացման կարգը

3.1 Հայտերը լրացվում են սույն հրավերի Հավելված N 1-ում ներկայացված «Գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի որոշման մեթոդաբանության» (այսուհետ՝ Մեթոդաբանություն) կետերի և ենթակետերի պահանջներին համապատասխան՝ ըստ Հավելված N 2-ում նշված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների և մասնագիտությունների»:

3.2 Մրցույթի Հայտը լրացվում և առցանց ներկայացվում է Կոմիտե՝ Կոմիտեի Հայտերի և հաշվետվությունների համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով (https://grants.scs.am/)՝ 2019 թվականի օգոստոսի 27-ից 2019 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ մինչև Երևանի ժամանակով ժամը 18:00:

3.3 Հայտատուն պարտավոր է Հայտի առցանց ներկայացված տարբերակից ներբեռնել տիտղոսաթերթը և մեկ օրինակ տպագիր տարբերակով, դիմումի հետ (սույն հրավերի Հավելված N 3) անձամբ ներկայացնել Կոմիտե՝ Հայտերի ընդունման վերջնաժամկետի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, հետևյալ հասցեով՝ քաղաք Երևան, Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ (ժամը 10:00-13:00 և 14:00-17:00): Հայտատուն պարտավոր է նաև Կոմիտե ներկայացնել աշխատանքային գրքույկի (աշխատանքային ստաժը հաստատող փաստաթուղթ), Մեթոդաբանության 1-ին կետի 2)-րդ և 3)-րդ ենթակետերով պահանջվող հրապարակումների տիտղոսաթերթի, տիտղոսաթերթին հաջորդող ծանոթագրություն (անոտացիա) պարունակող էջի և բովանդակության ցանկի, ինչպես նաև 4)-րդ և 7)-րդ ենթակետերով պահանջվող արտոնագրերի ու մրցանակների փաստաթղթերի պատճենները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ասպիրանտուրայի առկա ուսուցման տարիները հավաստող փաստաթուղթ՝ ստաժը լրացնելու նպատակով: **Տիտղոսաթերթը պետք է ստորագրված և կնքված լինի գիտական կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) կամ փոխտնօրենի (պրոռեկտորի) կողմից՝ հայտում ներառված գիտական արդյունքների հեղինակային բնույթը, ինչպես նաև առանց հեղինակների և աղբյուրների նշման փոխառությունների բացառումը հավաստելու նպատակով: Անհրաժեշտության դեպքում Կոմիտեն իրավունք ունի հրապարակելու հայտատուի տիտղոսաթերթը**:

4. Հայտերի ընտրությունը և վարկանիշային ցանկի ձևավորումը

4.1 Հայտերի ընտրությունն իրականացվելու է ըստ Մեթոդաբանության հիման վրա ձևավորված գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի (այսուհետ՝ ԳԳԱՑ) վարկանիշային տվյալների: Մրցույթի շրջանակներում գիտաշխատողների ԳԳԱՑ-ը որոշելու ընթացքում հիմք են հանդիսանալու՝

4.1.1 2014-2018 թվականներին հրապարակված գիտական հոդվածները (առնվազն 2 էջ): Հաշվի է առնվում տարեկան առավելագույնը 24 ընդհանուր գիտական հրապարակում: Ընդհանուր գիտական հրապարակումը՝ Մեթոդաբանության 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով որոշվող հրապարակումների գումարն է,

4.1.2 2014-2018 թվականներին հրապարակված մենագրությունները, կոլեկտիվ մենագրությունները, գիտամեթոդական ձեռնարկները, նյութերի կամ հոդվածների ժողովածուները (առնվազն 2 էջ),

4.1.3 2017-2018 թվականներին տեղի ունեցած գիտաժողովների մասնակցությունը: Հաշվի է առնվում համապատասխան ինտերնետային կայքէջի կամ փաստաթղթային հաստատման առկայության դեպքում՝ առավելագունը տարեկան 12 մասնակցություն: Միևնույն զեկույցի և գիտաժողովի նյութի հրապարակման դեպքում հաշվի է առնվում առավելագույն ենթաբաղադրիչը,

4.1.4 2014-2018 թվականներին ստացած արտոնագրերը: Հաշվի է առնվում համապատասխան ինտերնետային կայքէջի կամ փաստաթղթային հաստատման առկայության դեպքում,

4.1.5 2014-2018 թվականներին պաշտպանած թեկնածուական ատենախոսությունների ղեկավարումը: Հաշվի է առնվում տարեկան մեկ թեկնածուական ատենախոսության պաշտպանություն,

4.1.6 2014-2018 թվականներին դրամաշնորհների ու գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման թեմաների ղեկավարումը,

4.1.7 2014-2018 թվականներին ստացած գիտական մրցանակները: Հաշվի է առնվում համապատասխան ինտերնետային կայքէջի կամ փաստաթղթային հաստատման առկայության դեպքում,

4.1.8 գիտական աստիճանները: Հաշվի է առնվում մեկ՝ առավելագույն ենթաբաղադրիչը,

4.1.9 հրապարակումները, որոնց հեղինակի/համահեղինակի գիտական կազմակերպության (affiliation) կամ մշտական աշխատանքի վայրի (permanent address) անվանման մեջ նշված է Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպության կամ բուհի անվանումը,

4.1.10 գիտական հրապարակումների հղումները (առանց ինքնահղումների), որոնք առկա են «Թոմսոն Ռոյթերս»-ի (WOS) գիտատեղեկատվական շտեմարանում: Ինքնահղումներն որոշվում են հեղինակի (բոլոր համահեղինակների) կողմից տվյալ աշխատանքի վրա եղած հղումներով,

4.1.11 մինչև 2017 թվականը կայացած գիտաժողովների նյութերը, որոնք հրապարակվել են որպես գիտական ամսագրի լրացուցիչ համար կամ նյութերի կամ հոդվածների ժողովածու՝ հաշվի չեն առնվելու:

4.2 Կոմիտե ներկայացված Հայտերը 10 աշխատանքային օրերի ընթացքում անցնում են տեխնիկական ստուգում՝ Հայտերում լրացված տեղեկատվության հավաստիությունը ճշգրտելու նպատակով:

4.3 Տեխնիկական ստուգմամբ սույն հրավերի պահանջներին համապատասխանող Հայտերը Կոմիտեի համապատասխան ստորաբաժանման կողմից 3 աշխատանքային օրերի ընթացքում տրամադրվում են Խորհրդի քննարկմանը:

4.4 Վարկանիշային ցանկի ձևավորման ընթացքում՝

4.4.1 հայտատուների ԳԳԱՑ-ների հավասարության դեպքում դրանք դասավորվում են ըստ Մեթոդաբանության 1)-ից 8)-րդ ենթակետերի առաջնահերթությունների, իսկ վերջիններիս հավասարության դեպքում՝ պատահականության սկզբունքով,

4.4.2 հայտատուի գիտական և գիտատեխնիկական գործունեությանը համապատասխանող մեկից ավելի հնարավոր մասնագիտական դասիչների առկայության դեպքում՝ ընտրված (նշված) մասնագիտական դասիչը պետք է համապատասխանի հրապարակումների մեծամասնության ոլորտին (subject): Նոր մասնագիտական դասիչի ընտրության հիմնավորվածության վերաբերյալ անհրաժեշտ է ներկայացնել այդ մասնագիտության գծով գիտական աստիճան շնորհող մասնագիտական խորհրդի եզրակացությունը: Նոր մասնագիտական դասիչի առկայության դեպքում հաշվի են առնվում միայն այդ մասնագիտությանը

համապատասխանող հրապարակումները, որոնց ընտրությունն իրականացնում է Խորհուրդը,

4.4.3 հայտատուի գիտական համագործակցության անդամ լինելու դեպքում՝ հրապարակումների մեծամասնությունը պետք է հրատարակված լինի այդ համագործակցության շրջանակներում: Գիտական համագործակցության շրջանակներում կատարված աշխատանք է համարվում այն աշխատանքը, որի համահեղինակների թվաքանակն առնվազն քսան է,

4.4.4 հայտատուի մեկից ավելի գիտական համագործակցությունների անդամ լինելու դեպքում, որպես հիմք ընդունվում է տվյալ պահին գործող համագործակցությունը կամ, եթե համագործակցության աշխատանքներն ավարտվել են, ապա գիտական հրապարակումների մեծամասնությունն ընդգրկող համագործակցությունը,

4.4.5 յուրաքանչյուր գիտական համագործակցությանը հատկացվում է ընդհանուր տեղերի մինչև երկու տոկոսը՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ մասնագիտության շեմային գնահատականը հաղթահարելու պայմանով: Համագործակցություններին հատկացվող տեղերի գումարային քանակը չի կարող գերազանցել ընդհանուր տեղերի քանակի 1/3-ը:

4.5 Կոմիտեն, ելնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների և մասնագիտությունների ֆինանսավորման համար հատկացումների չափից և արդյունքների նկարագրության գիտաչափական տվյալներից՝ 5 օրացուցային օրերի ընթացքում որոշում է գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի կամ մասնագիտության շեմային գնահատականը, որին հավասար կամ բարձր ցուցանիշ ունեցող երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) տրամադրվում է Հավելավճար: Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը հաստատում է Մրցույթի արդյունքներով ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ղեկավարների ցուցակը և հատկացման չափը՝ ըստ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների և մասնագիտությունների:

4.6 Կոմիտեն 5 աշխատանքային օրերի ընթացքում գիտական կազմակերպություններին (բուհերին) տրամադրում է տվյալ գիտական

կազմակերպությունում (բուհում) աշխատող և Մրցույթի արդյունքներով ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ղեկավարների ցուցակը:

4.7 Կոմիտեի գլխավոր քարտուղարի և գիտական կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) միջև Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում է պայմանագիր՝ Մրցույթի արդյունքներով ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ղեկավարներին Հավելավճարի տրամադրման նպատակով:

Հավելված N 1
ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ (մինչև 35 տարեկան) գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ ՈՐՈՇՄԱՆ

1. Գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշը (այսուհետ՝ ԳԳԱՑ՝ E) որոշվում է ըստ հետևյալ բաղադրիչների՝

~~1)~~ Գիտական ամսագրերի հրապարակումների[1]: Հրապարակում գիտական ամսագրում՝ հոդված («Article») կամ ակնարկ («Review»)՝ «Web of Knowledge» և «Scopus» միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններերի կամ Բարձրագույն որակավորման կոմիտեի (այսուհետ՝ ԲՈԿ) ցանկերում ընդգրկված, ինչպես նաև այդ ցանկերում չընդգրկված, բայց գրախոսվող ու մատենագրվող ամսագրում հղման ենթական փաստաթուղթ: Հղում՝ տվյալ գիտական հոդվածի կամ ակնարկի վրա «Web of Knowledge» գիտատեղեկատվական շտեմարանում կամ ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված ամսագրի/պարբերականի հրապարակման մեջ պարունակվող հղում:

$$E_1 = \sum IF \frac{(1 + C/10)^{1/3}}{N^{1/3}},$$

<u>Յուրաքանչյուր հոդվածի կամ ակնարկի համար՝</u>

***IF*՝** *ամսագրի տվյալ տարվա ազդեցության գործակիցը (այսուհետ՝ ԱԳ)՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների:*

***N*՝** *ընդհանուր համահեղինակների, համաղեկավարների կամ համամրցանակակիրների թվաքանակ:*

***C*՝** *հղումների քանակ՝ առանց ինքնահղումների:*

Բնական գիտությունների, Ճարտարագիտության և տեխնոլոգիայի, Բժշկական, Գյուղատնտեսական և Հասարակական գիտությունների դեպքում՝

0.20*-ից ցածր* ***IF****-ի դեպքում նրան վերագրվում է՝*

0.20*՝ ԱԳ ունեցող կամ ԱԳ չունեցող, բայց «Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)» կամ «Scopus» հղման համակարգերում ընդգրկված ամսագրի դեպքում,*

0.15*՝ ԱԳ չունեցող, «SCIE», «SSCI», «(ESCI)» կամ «Scopus» հղման համակարգերում չընդգրկված, բայց ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված ամսագրի դեպքում,*

0.05*՝ ԱԳ չունեցող, «SCIE», «SSCI», «(ESCI)» կամ «Scopus» հղման համակարգերում, ինչպես նաև ԲՈԿ-ի ցանկում չընդգրկված, բայց գրախոսվող ու մատենագրվող ամսագրի դեպքում:*

Հայագիտության և հումանիտար գիտությունների դեպքում՝

IF-ին վերագրվում է՝

1.00*՝ 1.00-ից ցածր ԱԳ ունեցող կամ ԱԳ չունեցող, բայց «SCIE», «SSCI» կամ «Arts & Humanities Citation Index (AHCI)» հղման համակարգերում ընդգրկված ամսագրի դեպքում,*

---

[1] 1-ին և 2-րդ կետերով ներկայացված տարեկան հրապարակումների ընդհանուր քանակը չպետք է գերազանցի 24-ը:

0.50՝ *ԱԳ չունեցող, «SCIE», «SSCI», «AHCI» հղման համակարգերում չընդգրկված, բայց «(ESCI)» կամ «Scopus» հղման համակարգում ընդգրկված ամսագրի դեպքում,*

0.15՝ *ԱԳ չունեցող, «SCIE», «SSCI», «AHCI», «(ESCI)» կամ «Scopus» հղման համակարգերում չընդգրկված, բայց ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված ամսագրի դեպքում,*

0.05՝ *ԱԳ չունեցող, «SCIE», «SSCI», «AHCI», «(ESCI)» կամ «Scopus» հղման համակարգերում, ինչպես նաև ԲՈԿ-ի ցանկում չընդգրկված, բայց գրախոսվող ու մատենագրվող ամսագրի դեպքում:*

2) Մենագրությունների, կոլեկտիվ մենագրությունների, նյութերի կամ հոդվածների ժողովածուների հրապարակումների[2]: Մենագրություն՝ գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող, որևէ մեկ գիտական թեմայի նվիրված հեղինակ(ներ)ի գիտական արդյունքներին վերաբերող (ընդգրկող), ընդհանուր հղումներից առնվազն 30% հեղինակ(ներ)ի գիտական աշխատությունների վրա հղումներ պարունակող, հետազոտողների («Researchers») համար նախատեսված, առնվազն 5 տպագրական մամուլ[3] ծավալ ունեցող և «ISBN» ունեցող հրապարակում: Նյութերի կամ հոդվածների ժողովածու՝ գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող, մեկ կամ հարակից մի քանի գիտական թեմաների նվիրված և «ISBN» ունեցող հրապարակում: Նյութերի ժողովածուները ներառում են նաև մշակութային արժեքների և պատմական փաստաթղթերի գիտականորեն պատրաստված և/կամ գիտական նկարագրություն պարունակող հրապարակումները: Մշակութային արժեքների և պատմական փաստաթղթերի գիտականորեն պատրաստված հրապարակում՝ գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող, մեկ կամ հարակից թեմատիկաներին նվիրված, ողջամիտ ծավալի[4] առաջաբան և/կամ վերլուծություն պարունակող, տվյալ բնագավառի գիտական աստիճան ունեցող առնվազ մեկ մասնագետի գրախոսություն և «ISBN» ունեցող հրապարակում:

$$E_2 = \begin{cases} \sum B \dfrac{P_{Sh} \cdot (1 + C/10)^{1/3}}{N^{1/3}}, \\ \sum CA \dfrac{(1 + C/10)^{1/3}}{N^{1/3}}, \end{cases}$$

<u>Յուրաքանչյուր մենագրության, կոլեկտիվ մենագրության, նյութերի կամ հոդվածների ժողովածուի նյութի կամ հոդվածի համար՝</u>

B=0,50 *արտերկրում օտար լեզվով հրատարակված մենագրություն կամ կոլեկտիվ մենագրություն,*

B=0,20՝ *ՀՀ-ում հրատարակված մենագրություն կամ կոլեկտիվ մենագրություն (օտար լեզվով կամ հայերեն),*

---

[2] Երկրորդ ենթակետով ներկայացված հրապարակումների դասակարգման (մենագրություն, նյութերի, հոդվածների ժողովածու) վերաբերյալ վերջնական որոշումն ընդունվում է Գիտության կոմիտեի կողմից: Չեն գնահատվում բառարանները, կատալոգները, դասագրքերը, ինչպես նաև ժողովածուների, գիտաժողովների նյութերի խմբագրումը և կազմումը:

[3] Մեկ տպագրական մամուլը համաարժեք է A4 ֆորմատի 16 էջ տեքստի:

[4] Անհրաժեշտ ողջամիտ ծավալի առաջաբանի և/կամ վերլուծության մասին որոշումն ընդունվում է Գիտության կոմիտեի կողմից՝ իր կողմից ձևավորված մասնագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա: Մշակութային արժեքների և պատմական փաստաթղթերի գիտականորեն պատրաստված կամ գիտական նկարագրություն պարունակող հրապարակումների ընդհանուր գնահատականը չպետք է գերազանցի ԳԳԱՑ-ի 30%-ը:

B=0,15` *արտերկրում օտար լեզվով հրատարակված նյութերի ժողովածու,*

B=0,075` *ՀՀ-ում հրատարակված նյութերի ժողովածու (օտար լեզվով կամ հայերեն),*

B=0,05` *մշակութային արժեքների և պատմական փաստաթղթերի գիտականորեն պատրաստված հրապարակում,*

B=0,02` *մշակութային արժեքների և պատմական փաստաթղթերի գիտական նկարագրություն պարունակող հրապարակում,*

CA=0,15` *արտերկրում օտար լեզվով հրատարակված հոդվածների ժողովածու,*

CA=0,075` *ՀՀ-ում հրատարակված հոդվածների ժողովածու (օտար լեզվով կամ հայերեն),*

P_{sh}` *ծավալ (տպագրական մամուլ):*

3) Գիտաժողովների մասնակցության[5]: Գիտաժողովների թեզիսները («Abstract») և նյութերում չընդգրկված ստենդային զեկույցները («Poster») չեն գնահատվում:

$$E_3 = \begin{cases} \sum T \dfrac{1}{N^{1/3}}, \\ \sum \mathrm{P} \dfrac{(1 + C/10)^{1/3}}{N^{1/3}}, \end{cases}$$

<u>Յուրաքանչյուր պլենար զեկույցի կամ գիտաժողովի նյութերում («Proceeding») հրապարակման համար՝</u>

T=1,00` *արտերկրում տեղի ունեցած գիտաժողովի պլենար զեկույց[6],*

T=0, 50` *ՀՀ-ում տեղի ունեցած գիտաժողովի պլենար զեկույց,*

P=0,15` *արտերկրում տեղի ունեցած գիտաժողովի նյութ,*

P=0,10` *ՀՀ-ում տեղի ունեցած գիտաժողովի նյութ:*

4) Արտոնագրերի:

$$E_4 = \sum Pt \frac{1}{N^{1/3}}$$

<u>Յուրաքանչյուր արտոնագրի համար՝</u>

Pt=1,00` *արտերկրում գրանցված,*

Pt=0,10` *ՀՀ-ում գրանցված:*

5) Թեկնածուական ատենախոսությունների ղեկավարման[7]:

$$E_5 = \sum PhD$$

<u>Ղեկավարությամբ պաշտպանված յուրաքանչյուր ատենախոսության համար՝</u>

PhD=1,00` *ղեկավար,*

PhD=0,50` *համաղեկավար՝ 2 ղեկավարի դեպքում,*

PhD=0,25` *համաղեկավար՝ 2-ից ավել ղեկավարի դեպքում:*

6) Գիտական դրամաշնորհների, գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման թեմաների

---

[5] Գիտաժողովների մասնակցության տարեկան քանակը չպետք է գերազանցի 12-ը:

[6] Պլենար զեկույցի գնահատման համար անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան ինտերնետային հղումը կամ փաստաթուղթը:

[7] Հաշվի է առնվում տարեկան մեկ թեկնածուական ատենախոսության պաշտպանություն:

ղեկավարման: Գիտական դրամաշնորհ[8] կամ թեմա՝ մեկ և ավելի տարի տևողությամբ **հետազոտական** ծրագիր:

$$E_6 = \sum Gr$$

<u>Յուրաքանչյուր դրամաշնորհի կամ թեմայի համար՝</u>

Gr=0` *մինչև 5,0 հազար USD կամ դրան համարժեք ընդհանուր ֆինանսական ծավալի դրամաշնորհ,*

Gr=1,00` *5,0-10,0 հազար USD կամ դրան համարժեք ընդհանուր ֆինանսական ծավալի դրամաշնորհ,*

Gr=1,10` *10,0-50,0 հազար USD կամ դրան համարժեք ընդհանուր ֆինանսական ծավալի դրամաշնորհ: 50,0 հազար USD կամ դրան համարժեք ընդհանուր ֆինանսական ծավալը գերազանցելու դեպքում՝ յուրաքանչյուր 50,0 հազար USD կամ դրան համարժեք ֆինանսական ծավալի համար՝ 0,1 միավոր:*

7) Մրցանակների*:* Մրցանակ՝ ճանաչված միջազգային **գիտական** մրցանակ, ՀՀ Նախագահի, ՀՀ կամ օտարերկրյա որևէ պետության **պետական** մրցանակ:

$$E_7 = \sum \Pr \frac{1}{N^{1/3}}$$

<u>Յուրաքանչյուր մրցանակի համար՝</u>

Pr=10,00` *ճանաչված միջազգային գիտական մրցանակ,*

Pr=5,00` *ՀՀ Նախագահի, ՀՀ կամ օտարերկրյա որևէ պետության պետական մրցանակ:*

8) Գիտական աստիճանի: Հաշվի է առնվում մեկ՝ առավելագույն ենթաբաղադրիչը:

$$E_8 = Max(AD)$$

AD=0` *չունի գիտական աստիճան,*

AD=2,00` *գիտությունների թեկնածու,*

AD=2,50` *գիտությունների դոկտոր:*

9) ԳԳԱՑ-ը սույն մեթոդաբանության 1-ին կետի 1)-8)-րդ ենթակետերի գումարն է՝

$$E = \sum_{i=1}^{8} E_i :$$

[8] Գիտական դրմաշնորհի ֆինանսական բաղադրիչի գնահատման համար անհարժեշտ է ներկայացնել միայն հայաստանյան կազմակերպության կամ գիտահետազոտական խմբին հատկացված ֆինանսական ծավալի չափը՝ համապատասխան ինտերնետային հղումով կամ փաստաթղթով:

Հավելված N 2

ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ (մինչև 35 տարեկան) գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Մաթեմատիկա

1.2. Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ

1.3. Ֆիզիկա և աստղագիտություն

1.4. Քիմիա

1.5. Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ

1.6. Կենսաբանական գիտություններ

1.7. Այլ բնական գիտություններ

2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

2.1. Քաղաքաշինություն և ճարտարապետություն

2.2. էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ

2.3. Մեխանիկա

2.4. Մեքենագիտություն և մեքենաշինություն

2.5. Քիմիական տեխնոլոգիաներ

2.6. Նյութագիտություն

2.7. Բժշկական սարքաշինություն

2.8. Էկոլոգիա

2.9. Կենսատեխնոլոգիա

2.10. Նանոտեխնոլոգիա

2.11. Այլ տեսակի ճարտարագիտություն ու տեխնոլոգիաներ

3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Ընդհանուր բժշկություն

3.2. Կլինիկական բժշկություն

3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա

3.4. Այլ բժշկական գիտություններ

4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Անասնաբուծություն, անասնաբուժություն

4.2. Բուսաբուծություն

4.3. Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն

4.4. Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա

4.5. Այլ գյուղատնտեսական գիտություններ

5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. Հոգեբանություն

5.2. Տնտեսագիտություն և գործարարություն

5.3. Մանկավարժական գիտություններ

5.4. Սոցիոլոգիա

5.5. Իրավունք

5.6. Քաղաքական գիտություններ

5.7. Սոցիալական և տնտեսական աշխարհագրություն

5.8. Զանգվածային լրատվություն և հաղորդակցություն

5.9. Այլ հասարակական գիտություններ

6. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.1. Պատմություն, հնագիտություն

6.2. Լեզվագիտություն, գրականագիտություն

6.3. Փիլիսոփայություն, էթիկա

6.4. Աստվածաբանություն, կրոնագիտություն

6.5. Արվեստագիտություն

6.6. Այլ հումանիտար գիտություններ

Հավելված N 3
ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ (մինչև 35 տարեկան) գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
ՔԱՂԱՔԱՑԻ _____
(անուն հայրանուն)
_____ ից
(ազգանուն)
_____
(հասցե)
_____
(հեռախոս)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդունել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթին ----- ծածկագրով առցանց ներկայացված Հայտի պահանջվող փաստաթղթերը՝

- տիտղոսաթերթ,
- աշխատանքային գրքույկի (աշխատանքային ստաժը հաստատող փաստաթուղթ) պատճեններ,
- ասպիրանտուրայի առկա ուսուցման տարիները հավաստող փաստաթուղթ,
- մենագրությունների, կոլեկտիվ մենագրությունների, գիտամեթոդական ձեռնարկների, նյութերի կամ հոդվածների ժողովածուների հրապարակումներին վերաբերող համապատասխան պահանջվող պատճենները,
- ինտերնետային հղում չունեցող և մասնակցած գիտաժողովների ծրագրերի պատճեններ,
- ինտերնետային հղում չունեցող արտոնագրերի պատճեններ,
- ինտերնետային հղում չունեցող մրցանակների ստացումը հավաստող փաստաթղթերի պատճեններ:

Դիմող՝_____ (_____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

«____» _____ 2019 թ.

Հավելված N 3
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2019 թ. օգոստոսի 23-ի
N 553-Ա/2 հրամանի

ԽՈՐՀՈՒՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ (ԿԱՄ) ԹԵՄԱՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ (ՄԻՆՉԵՎ 35 ՏԱՐԵԿԱՆ) ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ

Ազգանուն անուն հայրանուն	**Գիտական աստիճան**	**Պաշտոն**
1. Հարությունյան Արայիկ Էդուարդի	պատմական գիտությունների թեկնածու	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար (խորհրդի նախագահ)
2. Հայոցյան Սարգիս Սամվելի *փոփ. ՀՀ ԿԳՄՍ նախարարի 12.02.2020 թ. N 140-Ա/2 հրամանով*	քիմիական գիտությունների թեկնածու	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ
3. Մովսիսյան Արտուր Եղիշի *փոփ. ՀՀ ԿԳՄՍ նախարարի 12.02.2020 թ. N 140-Ա/2 հրամանով*	——	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահի տեղակալ
4. Ղարիբյան Կարեն Բորիսի *փոփ. ՀՀ ԿԳՄՍ նախարարի 12.02.2020 թ. N 140-Ա/2 հրամանով*	տեխնիկական գիտությունների թեկնածու	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի գիտական քաղաքականության վարչության պետ
5. Վիրաբյան Անի Մարտունի *փոփ. ՀՀ ԿԳՄՍ նախարարի 12.02.2020 թ. N 140-Ա/2 հրամանով*	——	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի գիտական քաղաքականության վարչության գիտական քաղաքականության և

		զարգացման ծրագրերի բաժնի պետ
6. Ներկարարյան Խաչատուր Վլադիմիրի	ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր	Երևանի պետական համալսարանի ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան
7. Վարդանյան Ռուբեն Ռաֆայելի	տեխնիկական գիտությունների դոկտոր	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի էլեկտրոնային չափիչ համակարգերի և չափագիտության ամբիոնի վարիչ
8. Օկոև Գեորգի Գրիգորիի	բժշկական գիտությունների դոկտոր	Մոր և մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոնի տնօրեն
9. Սարգսյան Գայանե Ժորայի	կենսաբանական գիտությունների դոկտոր	ՀՀ էկոնոմիկայի նախարարության բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնի տնօրեն
10. Գևորգյան Սրբուհի Ռաֆիկի	հոգեբանական գիտությունների դոկտոր	Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսումնագիտական գծով պրոռեկտոր
11. Սարգսյան Սուրեն Թարխանի	պատմական գիտությունների_դոկտոր	ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող